Ռափայել Պատկանյան

Վանեցի կտրիճ

Հազիվ լրացավ քրսան մեկ տարիս,
Աղվամազ բրսավ երես ու ծնոտիս,
Թրշերես կարմիր վարդեր կրկաթի,
Ջիլերս ամուր՝ ասես երկաթի:

Տվեք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինեն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կրծամեմ,
Մեջս այդքան ուժ, ասեք, ի՞նչ անեմ...

Իմ պես բյուրերով լի է Հայաստան,

Ներրա սուրբ հողին ըլեմ ես ղուրբան
Մարմինը ուժեղ, առույգ է հային,
Այլ, ափսո՜ս, թմբրած է նորա հոգին:

Թե մի օր զարթի նորա վեհ հոգին,
Նա պարզ կրցուցնե օսմանլի ազգին,

Ո՛վ էր երկուսեն ստրուկ և կամ տեր...
Ա՜խ, ե՞րբ պիտ թնդաք, խեղճ հայի սրտեր: